Տ. ԲԱԳՐԱՏ ԱԲԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ

Տ. Բագրատ աբեղա Գալստյանը (ավազանի անունով՝ Վազգեն), ծնվել է 1971 թ. մայիսի 20-ին Գյումրիում:

1978—88 թթ. սովորել է Երևանի հմր. 156 դպրոցում:

1988 թ. ընդունվել է Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1993 թ. դեկտեմբերի 25-ին, Սուրբ Ստեփանոս Նախավկայի տոնին, ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի:

1994 թ. մայիսին ԳԵՐԱԶԱՆՑ գնահատականով ավարտել է հոգևոր ճեմարանը՝ ավարտուճառի թեմա ունենալով «Խոսրով եպիսկոպոս Անձևացի» (կենսագրական գծեր) և «Բացայայտութիւն Կարգաց Եկեղեցւոյ» (բնագիրն ու աստվածաբանությունը):

1995 թ. հուլիսի 23-ին, Պայծառակերպության տոնին, ձեռամբ Վեհափառ Հայրապետի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Այժմ Եկեղեցական երաժշտություն և Սուրբ պատարագի մեկնություն է դասավանդում հոգևոր ճեմարանում, աշխատակցում է Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնին և «Էջմիածին» ամսագրի խմբագրությանը: